

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր № 01-13

ք. Գավառ

«04» սեպտեմբերի 2013թ.

«Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունն՝ ի դեմս ռեկտոր Ռուզաննա Խաչիկի Հակոբյանի և «Հայաստանում եվրոպական քոլեջ» հիմնադրամը՝ ի դեմս տնօրեն Տիգրան Էդուարդի Գասպարյանի (այսուհետ՝ Կողմեր), համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետի և ՀՀ կառավարության 16.11.2006թ. թիվ 1760-Ն որոշումից բխող՝ «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ համապատասխան պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու կարգի», ՀՀ կրթության և գիտության նախարարի 09.03.2007թ. N 137-Ա/Ք հրամանի՝ կնքում են սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. «Հայաստանում եվրոպական քոլեջ» հիմնադրամի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են ուսումը շարունակել Գավառի պետական համալսարանում համապատասխան մասնագիտությունների գծով, և՛ առկա և՛ հեռակա ուսուցման ֆակուլտետներում:

2. Կողմերը համաձայնվում են՝

2.1. Գավառի պետական համալսարանում իրականացնել բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր այն մասնագիտություններով, որոնց գծով թույլատրվում է միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների կրթության շարունակումը բարձրագույն ուսումնական հաստատություններում:

2.2. Համագործակցել՝ համապատասխան մասնագիտությունների գծով ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և բարելավման նպատակներով:

3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4. Պայմանագիրը կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները և ստորագրությունները.

«Գավառի պետական համալսարան»

ՊՈԱԿ

«Հայաստանում եվրոպական քոլեջ»

հիմնադրամ

ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1

Էլ. փոստ՝ info@gsu.am

www.gsu.am

Fax: +374 060 46 02 01

հեռ. +374 060 46 02 01, +374 060 46 03 02

ք. Երևան, Դ. Անհաղթի 10,

Էլ. փոստ՝ www.erlicta.am

հեռ. +374 10 24 63 74

Ռեկտոր՝



Ռ. Խ. Հակոբյան

Տնօրեն՝



Գասպարյան